

ԴԻՍՇԵԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1906

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révol. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

RECEIVED
A. R. F. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905 - 1906

Մի խելագար թւական ապրեցինք, լի փոթորկոտ, համախարհային կշիռ ունեցող իրողութիւններով, ուր այնպէս հիւսուում են կօն տրաստները՝ վիշտն ու բերկրանքը, դառն, անողորմ հիասթափութիւնն ու սանձարձակ խանդավառութիւնը... Ապրեցինք անգուլ, ապրեցինք մեր բոլոր նետարդներով, մեր ամբողջ էութեամբ: Կեանքի զարկերակը խիտեց ուժգին ու յարսաւ, արեան Աստածը մի վայրկեան չը դադարեց շեփորել ու շանթել, դէպքերի ահեղ գահավիժումը մի վայրկեան չընդհատուեց:

Եւ—ուշագրաւ, պատմական իրողութիւն—այս անգամ ևս, ինչպէս մարդկային ամբողջ պատմութեան մէջ, ինչպէս քաղաքակրթութեան առաջադիմութեան դրեթէ բոլոր դրւագներում՝ պատերազմն է, որ „ծնող է հանդիսանում ամեն բանի“, մի մեծ ընդհարում էր՝ որ ուղղակի և անուղղակի արտադրեց այնքան նշանակալի իրողութիւններ, որ թէև արիւնոտ ու աւերիչ թէև ինքնին մի հսկայական ոճիր՝ բայց տիեզերական էւօլյուցիայի, հանուր մարդկային ազատագրութեան տեսակէտից թերևս աւելի արդասաւոր եղաւ, քան որևէ ուրիշը պատմութեան նախորդ մեծ անցքերից:

Նա ոչ միայն մահացու հարւած տւեց աշխարհիս ամենամեծ բռնապետութեան, իրեց նրանից զինուորական դերիշխանութեան յաւակնութիւնները, որ նա ցոյց էր տալիս ծայրագոյն Արևելքում, որ նա մի օր բանեցնել էր ուղում ամբողջ Ասիայի վրայ. այդ բարերար ընդհարումը խորտակեց միահեծան բռնապետութիւնը նաև ներսում: Առանց Մանջուրական պատերազմի, չը գիտենք, ճշմարիտ, թէ երբ կը տեսնէինք սահմանադրական, գէթ կիսազատ Ռուսաստան: Մի նոր դարադուլս—անտարակոյս... Սահմանադրութիւնը իրողութիւն է, որքան էլ ուժգին ու կատաղութեամբ փչէ աէակցիայի հողմը, որքան էլ մեծ լինի նրա տարածած աւերն ու սարսափը:

Եւ պոստական դէպքի յաղթանակներն էին, անշուշտ, որ առաջին հղօր խթանը եղան Ռուսաստանի յեղափոխական շարժումն: Գեո. անցեալ տարւայ յունարին, երբ Պօրտ-Արտուրի անկման շէնքերուցիւ լուրը հազար

բաւոր արձագանքներով շուռաչեց կայսրութեան բոլոր անկիւններում— սկսեց ուժգին, չը տեսնուած, փրկարար խմբումը, որ բռնկեց բանւորական հոյակապ մի ցոյցի ձևով, Գապօն բահանայի առաջնորդութեամբ, արքայանիստ Պետերբուրգում, հէնց Չմերային պալատի առաջ: Յայտնի է այդ անդրանիկ, մեծ յեղափոխական քայլի ողբերգական վերջաւորութիւնը...

Սակայն, առաջին զարկը տրւած էր արգէն, շարժումը այնուհետև դնաց *crescendo*, յարածուն թափով, դնաց խորութեամբ և տարածութեամբ, նա անցաւ մայրաքաղաքից դէպի գաւառները, իսկ Ծայրերը վաղուց արգէն բռնկուած էին... Ուժգին խլրտաց ուս զօրքն անգամ, բռնապետութեան ամենամեծ պատուաբը. նա շատ տեղերում բացարձակ ըմբոստութեան նշաններ տւեց, իսկ Սև ծովի վրայ մի ամբողջ զրահանաւ ութ օր շարունակ ծածանեցրեց Յնդափոխութեան կարմրագոյն դրօշը...

Կամարիլլան զգաց, որ եր օրհասը մօտ է և ինքն էլ թափ աւաւ, սկսեց մի անսիրտ ուէակցիա յեղափոխութեան դէմ, խտրութիւն չը դրեց միջոցների մէջ և անշուր, քստմնելի արարքներով ցամառն ճիչեր պուկեց քաղաքակրթ մարդկութեան շրթներնրից: Նա կազմակերպեց հակա յեղափոխութիւնը դիւլային հանձարով, զուտ կօզակային մեթօդով. պօլիցիական ամենավայրագ հալածանքների հետ միաժամանակ նետեց ամեն տեղ, ուր հնարաւոր է, ազգաբնակչութեան կոյր, անգիտակց, յետադէմ տարրը խաղաղ առաջադէմ տարրերի վրայ և Բարդոլիմէոսեան գիշերներ սաբբեց հրէաների, հայերի, նոյնիսկ ուսանների մէջ:

Եւ այնուամենայնիւ ազատարար հոսանքը անշեղ գնաց իր ուղղութեամբ, ճեղքեց բռնակալութեան կանգնեցրած թոււքերը և կիսով չափ յաղթանակեց: Մի հսկայական գործադուլ, որ միացրեց երկրի բոլոր ծայրերում հարիւր հազարաւոր բանւորներ, փոստի ու երկաթուղու ծառայողներ, մանր առևտրականներ ու գիւղացիներ, ինտելիգենտ տարրեր և այլն—աւեց վրձուական հարւածը և միահեծան բռնակալութեան շէնքը ճարձատիւնով սկսեց վիւտակելը: Գիւլլոմիտ Վիտտէն, որ քիչ առաջ կնքել էր Պօրտսմուտում ուսուեապանական խաղաղութեան գաշինքը և տարել էր թշնամու գէմ մի „փայլուն յաղթութիւն“, ուս յե-

տադէմ մամուլի կարծիքով, — (188) — աղատամիտ Ախտէն, իր ձեռքն առնելով կառավարութեան ղեկը և տեսնելով երկիրը անօրինակ ճգնաժամի մէջ, անխնայ անութեան ու քայքայման գազաթին հասած՝ թելագրեց սարսափահար վեհապետին մի բիչ աւելի առաջ գնալ նախորդ խոստումներէից և ստորագրել տւեց սահմանադրական և էֆիմի մի բանի հիմնական սկզբունքները: Վամարիլլայի ամենախոշոր դէմքերը՝ Պօքէդօնուսցէփ Տրեպով, մեծ իշխան Ալադիմիր Լայն՝ հրաժարական տւին:

Մի մեծ յաղթութիւն՝ որ սակայն անմիջապէս մընայլեց, նսեմացաւ գաղանային հէկատօմբերով... Գարձեալ խրոխտ գլուխ բարձրացրեց Սեհարիւրակը, դարձեալ Բարդուղիմէոսեան գիշերներ: Այն ինչ՝ սահմանադրական խոստումները իրագործման նշոյլ չէին ցոյց տալիս, — Ախտէն անվերջ տարուբերում ու յապաղում էր...

Ահա այդ միջոցներում պայթեց երկրորդ գործադուլը, — այս անգամ անպատրաստ, վարանոտ, անաջող — որին հետեւեց զինուած ապստամբութիւն Բալտեան նահանգներում ու Մայր-Մօսկէայում: Արդիւնքը — փոքրիկ, յուսախաբութիւնը — մեծ: Յեղափոխական կազմակերպութիւնները չափից աւելի էին գնահատել իրենց ուժերը, չափազանցել էին գործադուլի բանակի դիմացկանութիւնը և ըստ երևոյթին, յոյսեր էին դրել նաև զօրքի վրայ: Գործադուլը երկար չը գիմացաւ, համերաշխութիւնը թոյլ էր գանազան տարրերի մէջ, իսկ զօրքը ամեն տեղ կանգնած մնաց իր «կոշման բարձրութեան վրայ» և անողորմ մասսային ջարդերով թէպէտ և ահագին դժուարութիւններով, ճնշեց զինուած ապստամբութեան առաջին խրոխտ արտայայտութիւնները:

Բռնակալութիւնը նորից սիրտ առաւ: Զիջողութեան տրամադրութիւն նա առ այժմ չի ցոյց տայ այլ ևս, Գուրնօփօ-Ախտէան դաշնակցութիւնը գուցէ նոյնիսկ աշխատէ կրճատել յայտարարած սահմանադրական իրաւունքները... Սակայն, անհնարին է որոշ բան գուշակել նոյնիսկ մօտիկ ապագայի համար, մի երկրում, ուր ամեն օր նոր ու ահեղ անակնկալներ են պայթում: Մի բան պարզ է, այն՝ որ վերստին դէպի հին ուժերի մընայլ ևս բացարձակ անկարելիութիւն է: Բռնակալութիւնը չէ կարող ապրել միայն սպանելով նա զրանով իսկ փորում է սեփական գերեզմանը: Երկիրը անտեսապէս խաբու քայքայել է, ֆինանսական տագնապը ծայր է տալիս արդէն և Պարբզի բանկերն անգամ դժարանում են անել ցարի կառավարութեանը՝ նոր փոխաւութիւններ...

*

Ծայրագոյն Արևելքի մեծ գրաման գրեթէ իսպառ մոռցնել էր տւել մերձաւոր Արևելքը: Այնուամենայնիս, արևելեան խնդրի հանդիցը ևս փոքր ինչ արոր-

ւեց, բացեց: Մակեդոնեան ստացաւ, Անգլիայի ջանքերով, մի կարևոր ուժօրմի իրական երաշխաւորութիւն: Եւրոպական համերգը, թէև անկատար ու վարանոտ, կարողացաւ արհամարհել սուլթանի յամառ ու յարատեւ դիմադրութիւնը և նուային ցոյցի միջոցով ընդունել տւեց եւրոպական ելմտական կօնսորը Մակեդոնիայում: Գա խնդրի լուծումը չէ, ի հարկէ և մակեդոնական ռազմի բանակը այսօր միացած՝ պատրաստութիւններ է տեսնում նորից ապստամբութեան դրօշը պարզելու հայրենի լեռներում:

Տաճկահայ ժողովրդի համար այս տարին ևս անցաւ ապարդիւն, առանց որևէ թեթևութիւն բերելու: Երկիրը ընդհանրապէս խաղաղ մնաց — խաղաղ, ի հարկէ համիդական մտքով: Մանր ու խոշոր հարստահարութիւններն ու հալածանքները շարունակեցին: Երկիրը «հանգիստ» ծայրերը ցնցեցին: Վ. Պօլսում, Երկրորդ մօտ և Զմիւռնիայում տեղի ունեցան դէպքեր, որոնք վճռական ազդեցութիւն կարող էին ունենալ թիւրք պետութեան ու միջազգային քաղաքականութեան վրայ՝ արևելեան հարցի նկատմամբ, եթէ չը վիժէին: Յուլիսի 22-ին սուլթանական միջնորդ մօտ, դժոխային մեքենայի միջոցով սպանութեան փորձ եղաւ Աբդուլ Համիդի դէմ, — ամենալուրջ փորձը, որ երբեք կատարւել է նրա գահակալութեան օրից ի վեր: Տանեսակ մարդիկ զոհ գնացին, սուլթանը ճողոպրեց...

1905-ը աղէտի թւական էր հայութեան համար, ոչ պակաս դժբախտ, քան 1895-ը: Քանի՜ բանի յոյսեր ի դերու ելան, քանի՜ ծրագրեր խորակեցին... Մի կողմից, ճիշտէ, բռնակալութեան անցեալ մի քանի ոճիրները մաքրեցին նոյն բռնակալութեան ձեռքով — վերագարձրին հայ եկեղեցական դոյքերը և վերաբացեցին հայ դպրոցները, բայց միւս կողմից — նոր փորձութիւններ, նոր պատուհասներ:

Թուրքական արշաւանքը, Աովկասում, մի սե էջ ևս աւելացրեց մեր բազմատանջ ժողովրդի պատմութեանը: Լանկթամուրը վեր բարձրացաւ գերեզմանից և աղէտալի տեսարանների մէջ վերստին փորձեց յափուրդ տալ վրէժխնդրութեան անյագ ու ատավիկ ծարուհին: Հին, դժնդակ ուրւականն էր, բոլոր վայրագ ուժերի մարմնացումը, որ կրկին անգամ գրոհ էր տալիս փոքրիկ, պատմական ժողովրդի դէմ, որը դարերից է վեր բաղաբակրութեան դրօշն էր հակադրել այդ մնայլ ուրւականին...

Աովկասեան կոշմարը մի փորձաքար եղաւ հայ ժողովրդի համար, — նա ճանաչեց իր իսկական թշնամիներին ու բարեկամներին. թշնամիներ որքան շատ, բարեկամներ այնքան քիչ... Ամենուրեք կոյր նախանձ, ծով ատերութիւն, ամենուրեք ատամների կրճտոց՝ հայի կուլտուրական ընդունակութիւնների, անգամ նրա դոյութեան աւթիւ... Մի անողորմ դաս, որ ապարդիւն

չի անցնի մի զարհուրելի վիճակ, որ հրահանգում է փարել ինքզնութեան և միայն ինքզնութեան դրօշակին և մնալ միշտ կազմ ու պատրաստ՝ ճակատագրի փորձութիւններին պատուով ու աջողութեամբ դիմաւորելու համար... Գասը տալիս է արդէն ցանկալի արդիւնքը. հայ ժողովուրդը բարձրացրել է խաւար ու ժերի նեւած ձեւնոցը և այսօր, իր մարտական կազմակերպութեան շուրջը համախմբած, կուռում է թըշնամիների ճնշող բազմութեան դէմ: Բոպէն լի է մահասարսուռ խորհրդաւորութեամբ. երբէք թերևս ճակատագիրը այսքան անագորոյն խաղ չէ խաղացել...

Սակայն, դրա հետ միասին—այդտեղ է ուշագրաւ հակասութիւնը կեանքի—դրա հետ միասին՝ կենդանորար արշալոյսի ցոլքն ենք տեսնում մեր նահատակ երկրի մէջ: Ճարտկող հրդեհների լուսավառութեան մէջ կուռ ու ջարդի, լաց ու կականի հսկայական ժխորի միջից այսօր արարատեան հայ աշխարհում, առաջին անգամը նրա բազմադարեայ գոյութեան ընթացքում, խրոխտ ելևէջներով արձագանքում է ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն ա ղ ա տ ու լ թ ի լ ն ը, որ համայն Ռուսաստանի ըմբոստացման բռնուն յորձանքը խլեց միահեծան դահակալից:

Վովկասը այսօր կուռում ու միանգամայն տօնում է նաճած աղատութիւնը: Հին ուէժիմի սարսափները, կեղտն ու ժանգը կը վերանան, հայի ճակատից էլ մտայը կ'անցնի և նա հպարտ իր կոչումով, բազաբակրթութեան ու ազգերի համերաշխութեան դրօշը գըրկած՝ նոր թափ կ'առնէ աղատ ուէժիմի տակ ու թափ կը հաղորդէ նաև իր արիւնի եղբայրներին, սահմանից այն կողմ, որոնց ճակատագրի վրայ ուղղակի և անուղղակի պիտի անդրադառնայ ուէժիմի փոփոխութիւնը Պետերբուրգում ու Անգրկովկասում:

Հ. Յ. Գ ա շ ն ա կ ց ու լ թ ի լ ն ը, նոր տարւան թեւակոխելիս, կարող է հպարտ վստահութեամբ ասել, որ գործակցութեան իր բաժինն ունի նախորդ տարւայ մրկալի պայքարների մէջ: Մի կողմից բռնած յեղափոխական աշխատանքով Ցաճկաստանում, միւս կողմից թաթարական հօրդանների դէմ մղած անդադրում կուռնելով՝ Գաշնակցութիւնը, այնուամենայնիւ, համաձայն Պարիզի ու ժընէվի միջկուսակցային Խորհրդաժողովներում աւելած հանդիսաւոր յանձնառութիւններին, պարզեց եր դրօշակը, հրապարակ հանեց իր մարտախմբերը նաև ռուսական բռնապետութեան դէմ, ձեռք ձեռքի տւած Վովկասում գործող այլ կազմակերպութիւնների հետ:

Բայց «Գաշնակցութեան» գլխաւոր կուռը հ ա կ ա յ ե ղ ա փ ո լ ա ու լ թ ե ա ն դ է մ էր, և այդտեղ նա թափեց անբու եռանդ, այդտեղ նա տւեց անգնահատելի զոհեր, որոնք արժանի էին աւելի բարձր, աւելի վսեմ մի գործի... Բախտի չարաշուք անօրինութիւն: Չը լինէր թուրք մասսայի այդ հակայեղափոխական, եղբայրադատ ըմբոստացումը՝ մենք ուրիշ կերպ կը ծա-

ռայէինք Վովկասի աղատագրութեան գործին և փորրիկ Գուրիան մենակ չէր պարզի զինւած ապստամբութեան դրօշը...

Ջոհեր, զոհեր... Սարսափելի, անողորմ փորձութեան մի թւական էր մասնաւորապէս «Գաշնակցութեան» համար: Մեռելներ կան, որոնց պատճառած սուգը չի նսեմանում անգամ ժողովրդական համատարած աղէտների ուռաջ: Եթէ մի կողմից հայ ժողովրդի պաշտպանութիւնը, որ այնքան կորովի կերպով իրենց ձեռքն են առել մեր ընկերները և որ այսօր հիացմունքի ու երախտագիտութեան ցոյցեր է յարուցանում Անգրկովկասի ամբողջ հայութեան մէջ, — եթէ մի կողմից այդ բոլորը լցնում է մեր սիրտը մի հպարտ ուրախութեամբ, ապա միւս կողմից՝ մենք ամեն անգամ անփարատելի վշտով ենք համակուռ, մտածելով այն մեծ կորուստների մասին, որ մեր կազմակերպութիւնը ունեցաւ անցեալ տարւայ ընթացքում, թէ թուրք-հայկական անմիտ կուռնելում և թէ ուրիշ ձեռնարկների մէջ Վովկասից դուրս, — կորուստներ, որոնց թանկագին, նւիրական շարքերում առանձին վեհութեամբ բարձրանում է «Գաշնակցութեան» առաջնորդի, մեր անմոռանալի, անզուգական Քրիստոս ֆօրի կերպարանքը:

Յարգանք նրանց: Կեանքի անիւր պտուռում է անսովոր արագութեամբ, արիւնտո գէպքերը իրենց տենդային գահավիժման մէջ, նոր-նոր բացող դամբարանները՝ ժամանակ չեն տալիս անգրագաւնալու մեր պաշտելի հանգուցեալների վրայ և մենք ստիպւած ենք թուուցիկ կերպով միայն յիշատակել... Յարգանք նրանց: Հեռու վանքեր վիշտն ու վհատութիւնը նոր կեանքի նախատօնակին, նրանց պէս վառւե՛նք ուղմի կրակով, նրանց պէս տոգորւե՛նք դադափարի վերջնական յաղթութեան գիտակցութեամբ, նրանց պէս արհամարհե՛նք վտանգն ու կուռ խոչընդոտները և յամառ, անվկանդ պայքարի մէջ խոր ըմբռնենք, որ այսօր, այս դժոխային օրերում, հայութեան այս բացառիկ ճգնաժամի օրերում, ամենահրամայական, ամենաստիպողական պահանջն է — ա պ ր ե ց ն ե լ հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ի ն:

« Գ Ր Օ Շ Ա Կ Ի » Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

Թիֆլիս, 6 | 19 յունւար.

Թիֆլիսը պաշարման վիճակի մէջ է: Ալիխանով ոչնաւակւած է գեմերալ-նահանգապետ: Ջիրախալընցի 218 հոգի պատկանող այլ և այլ սօցիալիստ ու յեղափոխական կազմակերպութիւններին: Նրանց թիրթիրը փակեցին: Նրեան-Բագու երկաթուղային գծի հսկողութիւնը յանձնւած է թուրքերին: Վրաստանը լուրջ յուզումներ թատր է: Արլեմալի ընդհարումներ են տեղի ունեցում: հայ-թրքական կուռնելը շարունակում են, միշտ խրախուսւած կառավարական ղեակցիայից: Երևանում սուրբուրթ խաղա-

վուծվում է: Գանձակի դաշտի վրայ Բաղաքենդ, Գետաքեկ հայ գլխերը աւերած են: Հայերը իրենց կողմից քար ու քանդ արին թրքական մի շարք գլուխը՝ Շայլուար, Բալչու, Թօփալհասամու, Քերվենդ, Ումուտու և այլն: Դաւալի թուրքերը սլաշարեցին չորս հայ գլուխ, բայց կորուստով յետ մղեցին: Երեք թուրք գլուխը թալանեցին: Կոնը տակաւին շարունակում է. թուրքերը աղերսում են կառավարութեան՝ օգնութիւն դրեկ իրենց: Խանարաղ և Խրամուրթ հայ գլուխերը վրայ ևս թրքական յարձակում եղաւ: Մեր խմբերը նորից զրուսեցին Ասկերանի կիրճը, կտրելով հաղորդակցութիւնը Շուշու թուրքերի հետ: 72 թուրք Ֆուրգոններ ընկան հայերի ձեռքը: Զօրքերը գնացին թնդանօթներով՝ մերոնց Ասկերանից դուրս մղելու նպատակով: Քրդերն ու թուրքերը յարձակեցին նաև Դալաղաւաստի վրայ, բայց հայերը յաղթանակով յետ մղեցին:

ԹԻՖԼԻՍ: 12 25 յունւար.

Յունւարի 6-ին 2000 թուրք, 1000 ծխաւորի հետ արշաւելով Պարսկաստանից, յարձակեցին Նարմաբդի (°), Վարազաբոյնի, Նախիջևանի կի, Փրջամալի

վրայ: Կոնը տեց 6 ժամ: Թուրքերը յետ մղեցին, տանելով իրենց հետ մեծ լուով ղլակներ ու վիրաւորներ, այն ֆուրգոնների մէջ, որոնք բերած էին՝ աւարը բարձելու համար: Հայերի կողմից սպանւած են 8 տղամարդ, 4 կին և վիրաւորւած են 9 հոգի: Կառավարութիւնը անգործ է: Հայերը իրենց կողմից յարձակեցին Կարաբլինի վրայ. այդտեղ թուրքերը տէին 150 զսինք, հայերը՝ 9 սպանւած և 6 վիրաւոր: Զարտախլու մօտ հայերը քար ու քանդ արին Սօգութլու գլուղը:

Ամսոյս 9-ին Նախիջևանում՝ նորից հրացանածութիւն: Այնտեղ սպանում են գլխւած թուրք խմբեր Պարսկաստանից: Յունւար 7-ին՝ նոր ընդհարում եղաւ Մխահանում, այնտեղ սպանեց մի խմբապետ Ռուբէն Ստեփանեանը, իր 4 ընկերների ու 17 զիւղացիների հետ. թուրքերի կորուստը—190 մարդ. թուրք ազգաբնակչութիւնը՝ հայ յարձակողական արշաւանքից շնորհիւ՝ տրամադրու էր հաշտութիւն խնդրել, բայց այժմ խրախուսւած կառավարութիւնից՝ հա նորից ռազմական վերք է բռնում: Կառավարութիւնը սպառնակներ է լինուում՝ հայերին զինաթափ անելու:

Հ Ա Յ Ո Ր Պ Ի Ի Ն Ե Ր Ը

Ը

Դ Ա Ր Ե Ր Ո Ւ Վ Ի Է Ժ

206 ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՄՆԻՆԻՆԻ Գ. ԱՄԵԱԿԻՆ

«Յոյսերու երկաթէ սանդուխին կատարներէն է որ Աւետիս կ'արձակեմ,
Մոխիրներու, ղլակներու և վշտերու հովիտներէն է որ հասայ ի քիզ,
և աւաղ քլամիլիս թեզանթներէն իմ շքից ցեղիս արիւնը անուտովի զեռ կը թորայ...
Բայց քայլերս անխոնջ են և կամքս զերազօր և ձայնս լուծանօրն ամենի...
Գլուխս սուգերէն և վրէժէն և ճակատագրէն թէև ալեհիք,
Բայց, տն՛ս, աչքերս ղլացազնի մը աչքերուն չափ կարմիր և կերպարանքս է սոսկաոտնիլ:
Խնաստութեանս և ցասումիս արեգակին տակ իմ հուժկու իրանս անկխնարար,
Այլևս չուզեր այդ սնոտի փառքը յաւերժօրէն իր վրայ կրել:
և սպառառանքի, սղօթքի, լացուկոծի և ոլբի այն մատենաներուն մէջ,
Որ դար առ դար իմ սիրուններս իրենց արիւնը և տառապանքն են լացեր,
Մէկ կողմ նետեցի ես զամոնք, պարտութիւն, սորիացում և արաջանքէ արցունք չիւրթալու համար...
և մտածումովս և զայրոյթովս ձեր ցաւերուն ամենախոր արմատները չափեցի,
Տեսայ որ ձեր փրկութիւն մուրացողի բոսիկն ստեղծեալ մոխիրներէն այրեցան...
Տեսայ որ դուք արցունքին մէջ երջանիկ կ'իք և կենսարեք կ'ախլին դէմ ամարեկ...
Տեսայ որ արդարութիւնը ստեղծել պէտք էր և ազատութիւնը մուկգնարար յսփշտակի:
և այժօք, անասակի, իմ անկշռելի բարկութիւնս իր բոլոր հուրերը վտակց...»

«Ահա՛ քեզ ալ կը ղլմնեմ, եկո՛ւ և ճամբուս վրայ ոտքի՛՝ երգէ՛ որ արձակեմ,
ճամբուս վրայ ազմեքդէ՛ որ քիմայոյզօրէն և առյաւէտ արձակեմ
Իմ հուսաթիլ զակըմներու վայրենալանջ երկվարները փոթորկապար...
Ըսէ՛ որ զաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն ղլմնաց,
Ըսէ՛ որ թաւալեմ տարտամներու կոյտերը անխառնութեան կուրծքերուն,
և ոտքի հանեմ հողիս հրդէն և ըմբոստ մարտիկներուն հետ,
Քրնախմբուրութեան և սարսափի բանակներու արշաւանքն ալ անհաղաղ...
Ըսէ՛ որ շփոթմերս հինաւուրց հերոսներու հազագովը շփոթել տամ...
Ըսէ՛ որ երկաթներս կ'առնեմ և արդարաւորս շողացնեմ,
Ըսէ՛ որ ես ալ իմ արիւնախում մտոյզս շքեղօրէն թամբեմ,
Ըսէ՛ որ ամբոս ամբակներս ձորերէն վեր՝ լեռնէ ի լեռ միայն կ'այծեն...»

Երգէ՛, ահա՛, բողբոլն արլումը արև է դարձնը և կամքերն ու դաստակներն է ոլվնուցը,
 երգէ, Եղբայրութիւնը տօնուհեցաւ և շունչներն ու հոգիները մոյ՛ն դարերու վրէժովը պահուեցան...
 Ահա՛ թափուող արցունքները յի՛տ դարձան և կուրծքերու կոծուղը դաղրեցաւ,
 Ահա՛ բողբոլ մէ՛կ, բողբոլ մէ՛կ, իմ Գերիշխանի թևերու տակ յառաջացան.
 Արլեցո՛ւր զամոնք դեռ, եթէ կրնաս, և արժանաբար յիւցագներգէ՛ զլս, ո՛վ բնաբառը,
 Ես զլսեմ որ քու տակիղ չայրենիքն ծարան ունի ինչպէս վրէժն այնքան յուրերու...
 Ուրեմն լարերը զնիթիւն շանթերէն յափշտակէ, տրցակ սու տրցակ,
 Բարձրացո՛ւր ձեռքերդ և զամոնք զիշերուամ կապոյտներու կամարին կարկառէ՛,
 Եւ փառագարդէ՛ զլուսն առաւօտեան տատիլերու բոլորը մը լուսածոյ,
 Խնկարկէ՛ զլս և անմահութեամ տաճարներուն էն փառակերտը կառուցո՛ւր,
 Ծծրադրէ՛ և պաշտէ՛ զլս և երբ ժամը հասնի ողջակիզուն էն ինձի համար,
 Եւ փշրէ՛ քու հոգիդէն ճակատդ իմ կոթողն մարմարներուն յիւնաց,
 Որովհետև, ես ե՛մ, ես ե՛մ, ես ե՛մ, իմ ամուսն է Պայքար և վախճան Յաղթանակ»:

ՄԻԱՄԱՆԹՕ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻԻՆԱՀԵՂ ԸՆԳՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

III

Միանաութեամբ կամ շարժմանութեամբ սխալում են նրանք, որոնք պնդում են, թէ նաւթաշրջանի ամբողջ արդիւնաբերութիւնը հայերի ձեռքումն է, թէ «ամբողջ բուրժուապիսան—հայերն են»: Պետք է բացատրել և արատաճմանից յատուկ միտքայով զրկեած ինքնակրթները իրենց անաչտուստ մտածողութիւններով հերքեցին այդ բոլորատեսչայիչ թիրիմացութիւնը և ս, հաստատելով՝ որ հայ արդիւնաբերող պատրանի կողքին կանգնած են թուրք, ուսուս երկրպագի պատրաններ, որ բնդամենը երկու խոշոր հայ բնկերութիւնների հետ—Մանթաշեան, Աստղեան—դոյութիւն ունին երկու նոյնքան խոշոր թուրք բնկերութիւնների և երկու անհամեմատ աւելի խոշոր օտար ֆիրմաներ—Նօբէլ, Ռօտշիլդ,—որ հայկական արդիւնաբերութիւնը նաւթային աշխարհում կազմում է բնդհանուր արդիւնաբերութեան հասցի մէկ երրորդը, որ թուրք կրեւտները ամբարած են ու անշարժացրած իրենց ամբողջ ու անդուկների մէջ դրամական աճուելի հարստութիւններ, որոնց համեմատութեամբ չնչին է հայերի դրամազույցը, որ թուրքական այդ հարստութիւնները ստեղծած են հայոց աշխատանքով, որ սանր աւետարար, վաճառականութիւնը նոյն շրջանի մէջ կենտրոնացած է գրեթէ բացառապէս թուրք տարրի ձեռքում, որ թուրքի ձեռքումն են և քաղաքի սնեքը և լոյնտարած նաւթահայերը,—հարստութեան այդ անսպասազբերը կային և այլն:

Այն է ճնշումը: Ի՞նչն է այնպիսի յուսահատական ճիշդ թույնում թուրք կրեւտների և նրանց իգէօլոլների նախանձատ սրտից: Ի՞նչն է, որ բոլոր հայաստանցիներին բացառապէս է վայրենի կրքով ու հրապարակ նեւում անմիտ, ամբարի նշանախօսքը՝ «հայ կապիտալը—ասէ՛ թշնամին»:

Գա այն չէ, բնթկրքայ, որ իբր «ամբողջ բուրժուապիսան բազում հայերն են»—անարժան մի սուտ, որ դժբախտաբար գայիս է ուսուս սոցիալ-դեմոկրատներից—գա այն չէ, որ երբ թէ թուրքը զրում է իր կաշի վրայ կամ հոգու խորքում հայի անտեսական ճնշումը, այլ գա այն է՝ որ հայ «եկար» *) տարրը, կարողացել է 30—40

տարւայ բնթայքում, իր նախաձեռնութեան, բնդունակութիւնների շնորհիւ, պատկասելի դիրք զբաւել նաւթային աշխարհում, որ հայր բնդհանրապէս դժբախտութիւն ունի հանդիսանալ իբրև խոշոր կուրքաւոր արդիւնաբերական կենտրոն բոլոր ասպարեզներում, որ նա թափանցում է միշտ աւելի և աւելի սուտար թուով ինդուստրիական, սուտարական, բանկային ու այլ հաստատութիւնների մէջ, որ այնպիսի խոշոր հիմնարկութիւններ, ինչպէս են նաւթարդիւնաբերողների խորհուրդը, Բօրտային մարմինը, Տեխնիկական բնկերութիւնը՝ զլուսարդպէս հայերի ձեռքում են, (սչ սք, ի հարկէ, չէ արդեւում նաև թուրք տարրին՝ բաղմայնել իր ձեռնարկութիւնները և իր սուտար ներկայացուցչութիւնն ունենալ այդ հիմնարկութիւնների մէջ), որ հայ կապիտալը, ակտիւ, շարժուն ու նախաձեռնող, նեւտում է նորանոր ձեռնարկների մէջ, մինչդեռ թուրքական ահագին դրամազույցները կամ անշարժ դեպիւում են, կամ թէ բնւած են սոսի վաշխատուական գործարկութիւններով, հանդիսանալով ետպէս սպեկուլաթիվ մի ուժ, հակասակ նորագոյն կապիտալիզմի և անտեսադիտութեան օրէնքներին, որ թուրքական վաղեմի արհապետութեան այդ կենտրոնում «եկար» հայը չինում է դպրոցներ, բարեգործական ու այլ հաստարակական հիմնարկութիւններ, հիմնում է մտնուլ, ստեղծում է ամբողջ մասար մթնոստար, դրամում է ազատ պրօֆէսիօնների բնդարձակ տապալար, դրամում է ազատ պրօֆէսիօնների բնդարձակ տապալար, մտլիս է բժիշկներ, ինժեներներ, փաստաբաններ, որ հայը, մի խօսքով հանդիսանում է պրօօգրէսի մի խիստ, անդուլ բեղմնաւոր ասպարեզութեան ներկայացուցիչ, մինչդեռ թուրքը արևելեան անշարժութեան կնիքն է կրում յաւիտենապէս և այլն և այլն:

Այդտեղ է ահա հայկական անիծեալ «ճնշման» գաղտնիքը, այդտեղ է թուրք տարրի, թուրք խաչիզան ինտելիգենցիայի՝ ու «հաստարակութեան» դժգոհութեան պատճառը Բօրտայի պատճառը բաշտապէս, նոյնիսկ զլուսարդպէս ան ասակասն չէ,—ինչո՞ւ խեղաթիւրել տարրի իմաստը—և այդ «ճնշումը» տեղական չէ ու գաղտնի գաղտնի է: Նա դոյութիւն ունի ու միայն նաւթային մոյրարողութեամբ, այլ բոլորակալ Անդրկովկասում,—բոլոր վայրերում, ուր խոտն ապրում են հայ և թուրք տարրը: Այդ շարաբատտիկ «ճնշումը»—բարան

*) «եկար», բար, որով բուրժուապիսան «միտարակալութիւն» է արհամարհան ճեշով յաշխուհեղ հային, նրա կապիտալական

խոտատարիւնը միտարակալութեան ինքնին անմիտ մի արտայայտութիւն է... Թուրքը չէն, յաւենայի գլուս, հոգի աւազին գրապիւնը կովկասի այդ կամ այն անկիւնում ո՞րտեղ էին նրանք միեկու կովկաս գալի...

էլ խորթ հնչէ ճնշում բառը խեղճ, հարածական մի ժողովրդի դիմաց—յառուկ չէ սահմանափակ մի շրջանի նա, ըստ երևոյթին, հայի բնութեան մի յատկանիշն է, նրա հուժեղութեան անբաժան մի ատրիբուտ: Չէ, Թիւրքահայ-յառուկում ևս հայը, առում են, ճնշող տարր է, նա ճնշում է քրդին, տաճիկին, եղիզին... Չէ, սուլթանական ուժի մի տակ անգամ թշուառ ժողովուրդը հանգստութիւն չունի տղէտ ու հայրատեաց «Թէօրեախոններ»՝ ձեռքից... Նա պիտի ջնջի կամ իսպառ բթանայ, պիտի կորչի նրա մէջ գործունէութեան, նախաձեռնութեան ամեն յատկութիւն, կեանքի ամեն սաղմ, նրա բոլոր օրգանները պիտի անդամալուծին, ասրոֆիի ենթարկւին, ընդմիջտ պիտի մարի առաջադիմութեան մշտական ջանքը, որ այդ վիտուրը ժողովուրդը դարերից ի վեր անվանդ տոկունութեամբ կրում է ասիական խաւարի միջից, նա պիտի նմանի, պիտի հաւասարուի իր շրջապատին, այն ժամանակ միայն խաւարամոլ մարդատեսները կը հանգստանան, կը դադարեն ատել բազմաոսանջ նահատակին, կը սիրեն նրան...

Այս թուրքը, ինչ դասակարգի ու պրոֆէսիոնի էլ պատկանէ նա, բնագոյմամբ ատում է իր կուլտուրական հարեանին ընդհանրապէս, ոչ միայն արդիւնաբերողին ու առևտրականին: Միմիայն հայ կապիտալիստը չէ, որ բարձր է թուրք կապիտալիստից իր կրթութեամբ ու բմբունով, բարձր է և հայ աշխատատու դասը՝ արհեստաւորը, գիւղացին, պրօլետարը՝ իր վարժութեամբ ու յարաբերական գրագիտութեամբ, իր յափշտակութեամբ՝ գաղափարական հասանքներով, բարձր է, ի՞նչ խօսքը, և միջին հայ ինտելեկտնորը իր համապատասխան էլեմենտից թուրք ժողովրդի մէջ, և այդ ասորաբախտ բարձրութիւնը—որ ինքն բոտ ինքեան հպարտանալու աեղիք չէ տալիս հային, բանի որ այնքան, դժբախտաբար, ցած է կանգնած նրա ճակատագրի լծակից դրացին—այդ բարձրութիւնն է՝ կուլտուրական և ոչ լոկ տնտեսական՝ որ ուժեղացուցան զանգառանալով թուրք ղեկավարող դասակարգերի մտածողութեան վրայ, աղբիւր է դառնում այնքան թունոտ առելութեան, հակամարտութեան և որ թերևս ներշնչում է պանիսլաւոզմի հովերով տարած խուլիգան օ՛ղ (Ո՛Ղ) (Ո՛Ղ) ին յանցաւոր մտքեր, խիզախ, ուտոպիական մի ծրագիր—գուրս մղել (՝) բոնութեամբ ատելի հակաաւտորդին, ջնջել կամ գաղթեցնել նրան՝ հեռու մուսուլմանական նահանգներէն, հեռու թուրքական (՝) «հայրենիքից»...

Որտե՞ղ կը գտնէք նման կացութիւն: Կը ո՞վ է մեզուր, որ հայը համեմատաբար բարձր տիպ է քաղաքակրթութեան. ո՞ր լօգիկայով կը բարեհաճէք արգարայնել այն հուշարական և գիտակից Ոճրագործին, որը բիւրօհրատ-գահիճների հեռմիաբանելով հակոյական մի դուր է նիւթում գրացի խաղաղ ժողովրդի դէմ, լոկ այն պատճառով՝ որ չէ հանդուրժում նրա մտաւոր, քաղաքակրթական գերազանցութիւնը:

Ո՞ր օրինակէք, ո՞ր իրաւական կամ բարոյական կողէքնն է հրահանգում հուշարական սրտախուճապ կազմակերպել մի ազգի վրայ, անգամ էթէ՛ նա ամբողջապէս բաղիպած էինէր գեռած, արծաթատէր շարչիներից, անգամ էթէ՛ նա նիւթական հարստութեան անյաղ տենչով, բայց և խաղաղ օրինաւոր մրցակցութեամբ, լոկ իր ներքին կարողութիւնների վրայ յենւած՝ իրօք գրաւէր ամբողջ երկիրը, համէք անտեսական միահեծան տիրապետութեան, դուրս մղէր բոլոր հակառակորդ ուժերը... Ի՞նչ կը լինէր, էթէ՛ մի գեղեցիկ օր Անդրկովկասի որոշ կէտերում հայ գիւղական ազգաբնակչութիւնը, թերեւով ու հրացաններով, արշաւէր իր ծոցում բնակչութիւն հաստատած գերմանական գաղութների դէմ, որոնք իրենց աւելի բարձր կուլտուրայով, արնատեսական աւելի նուրբ մեթօդներով՝ ճնշող մրցակիցներ են հանդիսանում և հետզհետէ ծաւալում ու բարգաւաճում են, ի հաշիւ աեղացիների...

Հայ վաճառականութիւնը ատում է, նշաւակում: Բայց ո՞ր ազգի վաճառականութիւնն է սերւած, փաստաբանւած: Հայ առևտրական տարրը, որ ջնջին բեկորն է ամբողջ հասարակութեան, յայտնի է իր աւանդական արասներով, դրամի ստորայնող պաշտամունքով, դասակարգային բիրտ եղօյիղմով, որ տանտեսակ տարիներից ի վեր հայ քննադատող միտքը մարակել է ծայրայեղ խտուրթեամբ. բայց ո՞ր երկրում,

Արևելքի և Արևմուտքի ո՞ր ազգի մէջ կը գտնէք բուն, ազնիւ, էտիկայի սկզբունքներին համապատասխանող առևտրական դասակարգ: Եւ ո՞վ չը դիտէ, որ այդ արտները չեն սպառում վաճառականութեան սկզբունքի ամբողջ էութիւնը, որ այդ վերջինը իր բացասական գծերի հետ՝ ունի ամեն տեղ պատմութեան բոլոր շրջաններում, իր դրական, քաղաքակրթուղ աշխարհաշէն դերը, որ մասնաւորապէս հայ աշխարհում, Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Պարսկաստանի հօրիգօծներում՝ հայ առևտրական տարրը հանդիսացել է դարերից ի վեր երբև ճշմարիտ կուլտուրատիրէրը, քաղաքակրթութեան շահակեր, երբև միջնորդ Արևելքի և Արևմուտքի միջև: Գա մի ուժ է, վաստակեալ գոյութեան անհաւասար ու փութորակի պայքարի մէջ մի ուժ, որ այսօր արևտեսան աշխարհում անգամ համարում է գրաւական ազգերի կենսունակութեան ու առաջադիմութեան: Այսօր Գերմանիան, Կոմմիւ-Ալյաթեթը կայդէրի պետութիւնը, ճըդ-տունն ունի կարծես վերածելու առևտրական գործակալների մի հակոյական բանակի՝ արտահանելու, ծաւալելու, աշխարհը տնտեսապէս նաւածելու, բրիտանացուն՝ Արևմուտքի՝ այդ Հրէային՝՝ գուրս մղելու յամառ ձգտումով—և ոչ ոք, ոչ մի իրաւական կամ բարոյագիտական կողէքով հարկ չէ համարում բարկութեան ու ցասման շանթեր թափել գերմանական այդ անյազուրդ շահախնդրութեան, այդ «գիշատի»՝ ծաւալման առթիւ:

Կենսունակութեան, առաջադիմութեան գրաւական... Այնտեղ, ուր չը կայ այդ ուժը, ուր բացակայում է արնատեսական, առևտրական թուրքը, ինիցիատիվը, այնտեղ տնտեսաբար կենսաբար լիմում է, ճահճանուր, միտքը բարբոսում է և թունաւորում իր շրջապատը: Այդպէս է մեր մահմեդական դրացիների աշխարհում, ուր տնտեսական—առևտրական դարդացման անընդունակութիւնը թերևս փոքրօքոյնն է պակասութիւններից... Չուր են, զուր պանիսլաւիստ խուլիգանները պարծենում հասարակական կարծիքի առաջ, իրենց ժողովրդի կուլտուրական «բարոյականութեամբ», իրենց նահապետական «առաքելութիւններով», որոնք երկապէս պատուհաս են միայն երկրի ընդհանուր առաջադիմութեան համար: Գտնանք հարցին:

Անագօծիղմը, այդպիսով, ընդհանուր է, համաատարած*): ոչ գուռ անտեսական, այլ կուլտուրական ոչ դասակարգային, այլ ցեղական-ժողովրդական: Մեղաւորը՝ հայ կապիտալիզմը չէ, բուրժուազիան չէ, «մեղաւորը»՝ Բագաւն չէ, այլ ամբողջ հայ աշխարհը, ամբողջ հայ տարրի կուլտուրական առաջադիմութիւնը, բարձրութիւնը: Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ նաւթաշրջանը գոյութիւն չուներ, իբրև ինդուստրիական վայր և առհասարակ հայ կապիտալիզմը չը կար, բայց մենք փաստահանում ենք ա մ ե ն ա վ ճ ա ա ն կ ե բ ո յ ո Վ պ ն դ ե լ , որ թ ու ը ք ե բ ի հ ա լ ա ք ա կ ա ն ար շ ա լ ա ն ք բ և թ ու ը ք հ ա յ կ ա կ ա ն բ ն դ հ ա ր ու մ ն ե ր ր Ա ն դ ր կ ո վ կ ա ս ու լ կ ա ր ո յ է ի ն ա ա ղ դ ա լ ն ա և ս ր ա

* Այլ անագօծիղմի հասարակագիտական պատմական մասին լինող կը խօսենք: Ան այժմ քոյ քոյ սրի մեզ հետեւելու առի. հիւս է, սկեռես, որ խիստ, գիտակցական, մաս ային, փոխապարծ արեւու-քիւն ու քեւանութիւն միջև վերջին դէպքով՝ չէ եղել երկու հարեւան ժողովուրդների միջև մասնաւոր հայ ժողովրդի մէջ, որ այնպէս վարժել է խաղաղ կենսակցութեան իր գաւցու հետ եւ երբէ, ի հարկէ, չէր կարող մտնել, որ վերջինի մէջ այնքան մոլեկոնութեամբ մի օր կարծարւէր համայնաւարակ, պոխայիկ կրակը: Բայց միւս կողմից էլ իրականութեան հակառակ ենք գտնում եւ յայտնի պիտի այն պայտարարութիւնները, որոնք, քէպու գտնում խաղաղասիրական գովիկ նուպասակներով, հաստատել են ուղուակ, քէ: հայ եւ քուր միջև օրս սարկել են ինչ որ խիլիլիական ներգաճակութեամբ մէջ, իրարու հակակալով, իրար գնահատելով: Համայնակցութեան այլապիսի մի մեկ համար անհրաժեշտ են կուլտուրական որոշ նմանութիւններ, անհրաժեշտ են—սարբեր ցեղագրական միութիւնների մէջ—մաս ու ու կոգիկան վարդապետի որոշ տանիման, ձգտումների որոշ համապատասխանութիւն: Հայր իր գրքերով ու սեկցիաններով եղել է միւս՝ մի մեծ Անկայս իր մանկական գրագու համար: Այստեղ է խոր «անագօծիղմը»:

նից 20-30 տարի առաջ է թէ կառավարութիւնը նպաստաւոր էր:

Ով որ ժխտէ այդ՝ կամ չէ ճանաչում թուրք ժողովրդին, կամ թէ դիտակցաբար, ինտերնացիոնալիզմի ու անտերնացիոնալիզմի միտումներով վարադուրել է ուղղում այդ ժողովրդի նկարագիրը: Իսկ մենք այդ համարում ենք ոտքի դիմաց կրկնակի սփռել, և սօ իալիզմի ու միջազգային համաշխարհեան սկզբունքները դրաատելով հանդերձ՝ մենք անհրաժեշտ են սեպում և յանձնարարում ենք սիստեմատիկաբար մերկայնել ու խորազանել դրացի ժողովրդի այն *sui generis* հոգեբանութիւնը, որ քանակաբար դարձում դժուար է ստեղծում հայութեան համար, բռնանալով նրա ոչ միայն առաջադիմութեան, այլ և դոյութեան վրայ: Ի՞նչ կայ աւելի քստմենլի, քան վարադուրելու այդ սիստեմը... Այնպէս, որ Բագրի առաջին կարածից յետոյ այնպէս կատարութեամբ պահանջում էր, որ մամուլը լռէր, որ «յանուն խաղաղութեան» նա չը մերկայնէր թուրք խաժանի հրեշտութիւնները... Ի՞նչ կայ աւելի թեթևամիտ և աւելի յանցաւոր, քան հայ Ֆիլիստեր-ինտելիգենտի ու դեռաբուսիկ սոցիալ-դեմոկրատի սիրած սաքսիկը՝ աքերը խիել զազան-ալմուսի սիրազարծութիւնների վրայ և քառաթևան նոխալի դերին արժանացնել բարբառութեանը ողջակէզ բերած սեփական ժողովուրդը կամ նրա մի մասը...

Պէտք է խոստովանել, որ Ռուսաստանի և Արապայի խաղաղ մամուլը — չենք խօսում «Նովոյէ Արեմիա»-ի ու նրա գոյնի օրդաններին մասին — այդ տեսակէտից աւելի ծառայութիւն ձառուցին ճշմարտութեան և հայ ժողովրդին: Հաս աւելի օրէկալի կերպով նա ի տես դրեց բուն, թափանցիկ կրողութիւնը, մասնապէս եղաւ իրական, խոր պատճառների վրայ և հասարակական ուշադրութեանը մասնակցեց իսկական ճշմարտություն, պատասխանատուներին՝ նրանք, այդ թեթևաբանները հեղինակաւոր թղթակիցների բերնով չը բռնակրանայան ալ ու ձախ կրկնելով շարժական փրօզը ուսու քաղաքականութեան մեղաւորութեան մասին, մի բան, որ աւաղ արեւի պէս պարզ է և պէտք չը կայ անվերջ կրկնելու: Նրանք քիչ աւելի խորը գնացին արիւնատ պորլէմի վերլուծման մէջ և քաղաքական պատճառներից դուրս՝ տեսան արիւ կարգի պատճառներ կամ մուսոր, հոգեբանական, ցեղանկար-կուրաբանական և այլն: «Times»-ի, «Temps»-ի, «Frankfurter Zeitung»-ի, և «Matin»-ի պէս համաշխարհային օրդանները ճանրանում են թուրք ժողովրդի աւանանայատուութիւնների վրայ և փաստացի յօդածների մէջ ի յայտ են բերում այդ ժողովուրդը, երբե մի տեսակ անտարծիքով իր միջավայրում: Աւելորդ չէ մի քանի քաղաքական անել ինչ և նրանք էտպէս նոր բան չը պիտի տան հայ իրաւել ընթերցողին: «Times»-ը խօսում է թուրքի «գիշատիչ բնազդների» մասին (the predatory instincts of the turkars) որնք «ուս կատարութեան սքորադոր՝ քաղաքականութեան» հետ՝ և զել են այդ լրագրի կովկասեան թղթակիցի կարծիքով, աղէտների զլխաւոր պատճառներ: «Temps»-ի թղթակիցը յայտնու գծերով պատկերացնում է կուրտական խոր հակադրութիւնը հայի ու թուրքի մէջ, բնաբ փաստերով բնորոշում է թուրք տարրի, նայնիակ գեկավար բարձրագիւյլի՝ աւսպելական ազիտութիւնը, անդամ տարրական կրթութեան բացակայութիւնը՝ նրա մէջ: Մինչդեռ «Matin»-ի «Temps»-ի սակարկի «աւելի կրթած և աւելի աշխատասօր, քան կովկասեան միւս ժողովուրդները», ներկայացնում են իսկել ու ինտելիգենցիան, թուրք ժողովուրդը «ունի պահանջողական մի կուսակցութեան մտայնակար, նախանձախնդիր աւանդութիւնների և յարզող յարի վեհագեղական իշխանութեան»:

Արեւեան ատայնիզմը — շարունակում է պարիզեան խաղաղ ու չափաւոր օրդանը — և նայնիակ մահաւորական կրօնի հետհանդերձ արգաւ են պահում նրանց, թուրքերին, արեւմտեան աղատաշունչ դադափարների վարակաւից, որանցով ապարւում են հայերը... Լեռների մէջ էլ ապրում են այլ

և այլ ժողովուրդներ, քիչ թէ շատ վայրենի, սրնք մօտիկ ազգակցութիւն ունեն Բագրի թուրք ազգաբնակիչեան հետ նրանք ապրում են աւաղակութեամբ... «Matin»-ի ուշիմ թղթակիցը, Գաստոն Լեոնու, սրին, ինչպէս և միւս թղթակիցներին, չէ կարելի մեղադրել հայասիրութեան ու թրքաստեղութեան մէջ, որը միանգամայն անաշուտ արձանադրի դեր է ստանձնել հետեւալն է դրում նաև թային աշխարհից, սեպտ. 20-ին.

Նրկու ցեղերին անդունդ է բաժանում... Հակադիր յարակցութիւններ (*affinités*), ներհակ բնադներ և քաղաքակրթութեան մի իդեալ որ մինք հետապնդում է, միւսը՝ յետ է մղում... Թուրքերը կարօրէն յանձնառու են լինում (հայաստեայ կառավարութեան առջև) պատժել մի աղատամիտ, հակապետական ժողովուրդ, որը հենց եր իդեալով աշխարհ մի ուժ է բռնապետական կառավարութեան համար... Հետեւեալ թղթակցութեան մէջ, սեպտ. 21-ին, Լեոնու ջրում է տարածւած կարծիքը՝ հայերի իբր թէ զրկող հարստահարող գերի մասին և բնադնում է այն իրողութիւնը, որ «թուրքն է հարստերը» և որ դրամական հարստութիւնը ևս, նայթային աշխարհում, անհամաստ աւելի մեծ է թուրքերի ձեռքում:

Իսկ ի՞նչ է ստում Ռուսաստանի մամուլը, նա որ հաղապարտ բացատրութեամբ, մինչև իսկ դրեթէ չի հետաքրքրւել հայի ձախառնողով և շատ էլ համակրութեամբ չի վերաբերւել դէպի մեր տանջող ու արեւնաւող ժողովուրդը...

Անհարին է և ներկայ յօդածի շրջանակից դուրս է նայնիակ համաստեայ ամփոփել այստեղ այն մտիկարական ու ուշադրաւ տեսութիւնները, որ «Ռուս», «Նովուսի», «Պրավօ», «Բիթեվիա Ադամսոս» և այլն — չենք էլ յիշատակում գուտ սոցիալիստական օրդանները — ներքեցին կովկասեան անլուր աղէտներին, ծանօթացնելով հանգամանօրէն աշխարհի իրականութեան փոխօրէնի հետ, լուսաբանելով թուրք-հայկական հակամարտութեան ճշմարիտ իմաստը:

Ազգէինք միայն մի քանի յատկանշող քաղաքաներ անել, սրնք, իրաւ է, դարձեալ ծանօթ ճշմարտութիւններ պիտի պարունակեն, բայց ի՞նչ արած... Պէտք է յար և միշտ կրկնել, արձարձել այդ հանրամանօթ ճշմարտութիւններն անգամ, մինչև որ նրանք խոր թափանցեն անդիտակիցների ու փորձուներով հայաւանների ուղեղները, որնք հակապետութեան և «անաշուտութեան» զուով բռնած՝ ուղղում են անպատճառ միւսնայն ատխաակի վրայ գնել հայ և թուրք ժողովրդին, հաւասարապէս մեղաւոր ճանաչել երկուսին էլ և մինչև իսկ՝ դահիճների մեղքը փաթաթել զոհերի շլինքին: Այդպիսի պարագայում, կարծում ենք, որոշ կարեւորութիւն ունին օտարների, ոչ-կովկասցիների վկայութիւնները: Եւ մեր նրանց առաջ հեռւում՝ ոչ ազգայնական փաստերով ևս, որից ենք բերում — այլ անպատկառ խեղաթիւրումները ի յայտ գնելու և ճշմարտութիւնը վերականգնելու նկատմամբ:

«Նովուսի» մէջ դրում է Ստարցել, կովկասեան նախկին ուսու հրապարակագիրը, որ ոչ թուրքերի թշնամի է եղել, ոչ էլ աւանանայական փայլել է հայկական համակրութիւններով, այլ աւելի շատ՝ յայտնի է իբրև միջազգայնութեան գաղափարի փաստաբան:

Անցեալի խորհրդաւոր ծոցից բարձրացաւ մի հրեշ, որ սպառնում է սնչացնել այն բոլորը, ինչ որ ստայել է բազմամիտ սերունդների աշխատանքով, ինչ որ քաղաքակրթութիւնը արտադրել է կովկասում:

Ի՞նչ տեսլ երբ մի ամբողջ ժողովուրդ, սկսած իր աւսաջնորդներից մինչև դիւղացիները, բարձրանում է մի ուրիշ, բոլորովին անմեղ ժողովրդի դէմ և անխնայ կատարում նրան: Հայ նաւանները պահէլ են արդեօք մահաւորականներին գերութեան, սորկութեան մէջ, կամ արդեօք կեղեքէլ են նրանց, քամել են վերջին հիւթերը: Ամենեկին...

Ապա պատմելով թէ ինչպէս սկզբներում ուսու կառավարութիւնը խորաթիւն չը գնելով ազգութիւնների մէջ և թայլ չը տարլ վահաւորականներին, առաջնայն պէս, հա-

*) Տես 1905 թ. սեպտ. 25-ի համարը:

*) Տես սեպտ. 15-ի քաղաքակրթիւնը:

Այն, ինչ որ անհնարին է մէջ ժողովրդի համար, հնարաւոր է դառնում միւսի համար: Այն աշխարհուէր երամական բնորոշ, որ յատուկ է վայրենի Տորգաներին, երբ բարեբախտաբար, հեռու է հայ ու վրացի ժողովուրդների հոգեբանութիւնից, իր ահեղ մտկեղնութեամբ ժայթքում է թուրք բազմազակ ազդարնակութեան մէջ, որը պարտատ, բնդունակ է յայտնուում իրաւութիւնները պարզ ապացու ին այդ—տանայ վարանելու ձայնակցել իր շէֆերի ազդանշանին և տարերային իմաստով դասալիժեւել խաղաղ, անմեղ ազգաբնակութեան վրայ:

«Եւ լի, վայր գիտալուրին» — հնչում է դու մարտահրաւերը, և վայրենաբար, ասես գեանի տակից, դուրս են կոչում սպառազինւած բանակներ, գալիս են հեռուից, սահմանի մեծ կողմից, գալիս են և մտախից, հայ ժողովրդի հէնց քթի տակից, նրա երեկւայ հաշա ու մտերիմ բարեկամներն անդամ, նրա աղ ու հայր վայելքները, նրա բնասնական օձախի աշնաները մի զարհուրելի, հրդայական վրէժխնդրութեամբ, ստամները կրծառայնելով, ծառանում են նրա գէմ Տուր ստացւածքը, կամ ասուր կեանքը... Կենք պարզագէտ նախապատմութեան մէջ ենք, բնթերցող սրբան էլ աշխատենք վարագուրել դաման, անողորմ իրականութիւնը, որքան էլ վաղենայք ինտերնացիոնալիզմի ու համերաշխութեան մասհողութեամբ մեղմել գեօնային, սիրա կարատող իրաւութիւնները, մենք կատարեալ նախապատմութեան մէջ ենք, այն մասը շրջանում՝ երբ մարդկային ցեղերը, անասնական տեսակների պէս, գիշատիչ ակորժակներով բռնւած, զբոհ էին ապիս իրենց նմանների գէմ, երբ բանի ուժը, վայր յայթուածին՝ ազդակելով, խրոխտ ու յայթական սառնում էր իր արիւնստ նախնիների վրայ...

Անշուտ, և այդ պարագայում լուսւմ են անտեսական պատմաբանութիւնները, խղճալի կերպով օգն են ցնդում կապիտալիզացիայի ու պրոլետարիզացիայի՝ նկատումները, և տակը մնում է մի ստիպելի, մի գեօնգակ փոստ, այն, որ Times-ը սրտկում է predatory instincts բառերով որ Ստարցեկով անւանում է անցեակն ծոցից բարձրադր մի հրէշ—մի իրաւութիւն, որ իր ահարկա պարութեան մէջ վայրուց ծանօթ է ամեն մի հայի...

Այլ մեղին չըր գիտէ, որ նոյնիսկ սովորական, նորմալ ժամանակ, առաջակութեան համաձայնաբար—որ հաւասարապէս մտաշէլի է թուրք բեկերին ու կիսապրօլետար գեղջուկներին—իսկոյն բռնում է սար ու ձորեր, հէնց որ անգրկավկասեան այս կամ այն գաւառի գլուխ է կանգնում մի թոյլ գաւառապետ, մեղմ միջոցների սիրահար: Եւ սօջ չըր գիտէ, որ համաձայնաբար կարում է անմիջապէս, հէն որ նա շաղկիկ փոխում է, հէնց որ գալիս է իրատ, անաղամ միջոցների ներկայացուցիչը...

Այս պարզ, անզրպուտ հայ գիւղացին՝ աստիկահայր, լի է կովկասահայր՝ կր վկայէ ձեզ, ասանց խորիմաստ ֆորտւնների գիմելու, լիկ իր պապերի ու իր ամենորակ փորձի վրայ յենւած, որ իր անօրինակ գրգռատութիւնների պատճառը մաստլման ազդարնակութեան անասական էր ասուր կ գր ու լ ի ի ն ը չ է, որից ինքն էլ աստ պում է, աւելի մեծ շափսփ, այլ որ իր դրացին, մուսուլման ժողովուրդը անհանգիստ ասուր է, անհանգիստ է անկախ ապահովութեան ու անապահովութեան նկատումներից, անկախ

ժամանակից ու ասրածութիւնից, և՛ Անգրիկովկասում, ուր նա ենթակայ է քրիստոնեայ լծի, և՛ հաճկաստանում, ուր նա յայտնւում է տիրապետող տարր—և որ նա անհասնելի է միշտ բացասական վաւըար իմաստով, տակուն աշխատանքից բնդհանրապէս խորշող, թաւանի ու սպանութեան միշտ տրամադիր բայց հայի սամկական դատարութիւնը կ'առէ ձեզ և այն, որ մահմէդական տարրի այդ խուժարուժ անհանգստութիւնը խիստ դիւրութեամբ սանձահարուում է նոյնիսկ Թիւրքիայի ու Պարսկաստանի պէս կէս-անիշխանական երկրների մէջ, երբ կառավարութիւնները կամենում են այն, որ այդ անհանգստութիւնը, թաւանի ու աւերի այդ խորարմատ բնազդները մինչև օրս հրաշալի կերպով զուգել են նաև Անգրիկովկասում, որ յանցանքի ու ոճրի հերոսներին կանգնեցրել է յաճախ Արբիբի ու կախաղանի հեռանկարը, որ այդ հեռանկարի ստրատիգերը վայրկենաբար չքացան, որ անպատժելի է ան թի տակց ու լ թ ի լ ը թ ի լ ը յանկարծակի բռնեց նրա սեղը...

Յանկարծակի... Այդտեղ արդէն միջամտեցք դուք, ինտելիգենտ բնթերցող, այդտեղ սամիկ հայ գիւղացու խելքը չի հասնում. ասանց արամաբանութեան օրէնքների հետ ծանօթ լինելու, նա աւելց ձեզ մերի, անպաճոյճ և պերճական ցուցմունքները, որոնք ոչ այլ ինչ են, բայց եթէ հսկայական արագեղիցի բուն, ծնող—նիւթող պատճառները, իսկական (causes determinantes)...

Իսկ յանկարծակի— ձեզ յայտնի է, որ պատահական ոչինչ չըր կայ ոչ բնութեան և ոչ մարդկային հասարակութեան մէջ — յանկարծակիս՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկար տարիներից իվեր պատրաստող, զարգացող իրաւութիւնների ձևկատարական հետևանք, կամ ասենք աւելի պարզ—այն շարաշուք, ոճրագործ քաղաքականութիւնը, որ ստիական բռնաւորների ուղքում միակ ու գերագոյն միջոցն է թումբ գնելու Յեղափոխութեան բարձրացող պիլքի առաջ...

Վման պատճառներ, նման հետևանքներ: Կենք ոչ մի էական տարբերութիւն չենք տեսնում աստիկահայր և սուսահայր կատարածների մէջ, նրանց ազբիւր-պատճառների ու արտայայտուելիւնների տեսակետից (բացի ի հարկէ, նրանից՝ որ կովկասում գաղանայած խուժանի հարւածներին, հայկական դիմադրութիւնը պատասխանում է ոչ նուազ կատարել հայ ասրի մէջ, նոյն ոճրագործ, խուլիգանական ջաղաքականութիւնը, նոյն քառմնելի, անարգ գործիքը՝ իգէմն վայրագ, արիւննաճարաւ, նախապատմական մարդակներին... Սակայն, հաստացած եղէք, բնթերցող, որ եթէ կովկասեան սոցեալ-դեմոկրատները շնորհ անէին մակերեսային մարդանքներից դուրս՝ փոքր ինչ խորը գնալ աստիկահայրական աշխարհաշատ աչ սրբերութեան անալիզի մէջ, մի սղբերգութեան, որի առաջին գործողութիւնը խաղացել է դեռ աստ տարի արանից ասալ,—այդտեղ ևս նրանք պիտի հարկէին, մաքի մի ու բալի խաղութեամբ ու սարկութեամբ, նոյն բնդհանուր, ծանօթ բառերը՝ ֆեօդալիզմի քայքայում, գասակարգային կախ, հայկական նայտնակղճ, հայ սուկարական մրցութիւն, դիֆֆերենցիալիզմ, կապիտալիզացիա, պրոլետարիզացիա... Ա՛ր ես Մարքս... Երբէք մի մեծ, պատկասելի թեօրիտ չէ ենթարկել այդքան ակուր պրոֆանացիայի:

(Շարունակելի)

ՀԱՅ—ԹՐԻԱԿԱՆ ԿՈՒՆԻՔ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, յունվար 9 | 22.

Կնչից սկսենք: Կենց չըր կայ Թիֆլիսի հայ-թուրքական կոնիւնքը, որոնք տեղին մի ամբողջ շարքով՝ հսկանքների 22—28, կրկար նամակի նիւթ ինել: Այդ յետոյ:

Կտենք միայն, չըր նայելով Բորչալուի թուրքերի ահադին բանակութեամբ քաղաք թափուելուն, շնորհիւ Գաշակացական բնտիր կազմի, հայերը պատույ դուրս եկան: Այ՛ շաբաթ շարունակ թուրքերի կատարեալ հարձանք էր քաղաքում, մինչև որ իրանք ստիպւած եղան եկտրներին ծանապարհ գնել և հաշտութիւն խոզրել: Հեռաբքերին այն է, որ կովկասեան մայրաքաղաքում անդամ կառավարութիւնը հայ-թուրքական կոնիւնքի վերաբերմամբ նոյն սակ-

տիկան ունեցաւ ինչ որ ամեն տեղ «laisser faire», և մի ամբողջ շաբաթ թուրքական մտաբերութեամբ էր մեր խրմբերով, զիչէր ցերեկ զնոյն ժամին շոր կաշիք, ասանց որ կառավարութիւնը մի մաշի չափ ուշադրութիւն դարձնէ: Սա կատարեալ «սկանդալ» էր: Թուրքերը մեծամեծ նիւթական վաճառներ կրեցին և շատ էլ կատարեցին: մինչև այժմ ուշքի չեն եկեր Շատերն իսպառ: Հետագան քաղաքից՝ շտապ շտապ ծախելով իրենց ունեցած շունչեցածը: Բազմաթիւ վերին աստիճանի հետաքրքիր մանրամասնութիւններ կան՝ բնորոշելու այս քաղաքի գնառան յեղափոխական կառավարութիւնների դիրքը (մանաւորապէս այս գեմօկ) դէպի հայերը, բայց դա մեզ շատ հետու կը տանէր: Ասեմք միայն, որ վրաց ազնւականներից շատերը բացարձակ թշնամական դիրք բռնե ին դէպի հայերը և բարեկամական ցոյցեր արին թուրքերին: Նոյնիսկ մի պատգամաւորութիւն գնաց Բորչալուի թուրքերի մաս վրաց աշխուհականներից, որոնց այդ միտիան չափազանց նենդաւոր լինելու բոլոր նշաններն ունի:

